ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 24
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 24

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՐՈՆ ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քալաշյան,

Տեղեկացնում ենք, որ քաղաքացի Սեմյոն Շալվայի Բաբայանը, մշտապես մասնակցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին:

Հարկ է նկատել, որ վերջինս ինչպես մրցույթի թեստավորման, այնպես էլ հարցազրույցի փուլերի ընթացքում դրսևորում է անհարգալից վարքագիծ՝ մրցույթի մասնակիցների, պատասխանատուի, մրցութային հանձնաժողովի կազմի, Հանձնաժողովի ղեկավար կազմի և աշխատակազմի նկատմամբ:

Անհարգալից վարքագիծն ուղեկցվում է Ս. Բաբայանի կողմից անպարկեշտ և հայհոյախառն արտահայտություններով, զրպարտություններով, մրցույթի ընթացքում հասարակական կարգը խախտող և բախումներ հրահրող գործողություններով, որոնք իրենց բացասական հետևանքն են թողնում մրցույթի անցկացման և Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքի պատշաճ կազմակերպման վրա *(որպես նշվածի ապացույց՝ կից ներկայացվում են տեսաձայնագրություններ)*:

Հավելյալ նշենք, որ վերը նշված գործողություններից բացի, Ս. Բաբայանը Հանձնաժողովի աշխատակիցների հետ հեռախոսազրույցների ընթացքում իրեն իրավունք է վերապահում սպառնալիքներ, պատիվը և արժանապատվությունը ոտնահարող արտահայտություններ հնչեցնել Հանձնաժողովի անդամների և առանձին աշխատակիցների վերաբերյալ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերը շարադրվածն իր համադրության մեջ դիտարկվում է որպես բարեվարքության համակարգի տարրերի և վարքագծի սկզբունքների կոպիտ ոտնահարում *(բարեկրթություն, հարգալիրություն...)*, խնդրում ենք Ձեզ ձեռնարկել հնարավոր միջոցներ *(մասնավորապես՝ իրավական գործիքակազմ հատկապես հարցազրույցի փուլի համար)*՝ նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:

Կից՝ 2 էլեկտրոնային ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍՏԵՓԱՆ ԴԱՎԹՅԱՆ**

Կատարող՝ մարդկային ռեսուրսների կառավարման
փորձագետ Սարգիս Միրզոյան
012 77 77 24